# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՀՊ-26/18 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | - | - | - | «Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ | «ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ» Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի Պարգևագիրը իրենից ներկայացնում է փայտից պատրաստված 200մմ (թույլատրելի շեղումը` /±3մմ/) լայնությամբ, 240մմ (թույլատրելի շեղումը` /±3մմ/) բարձրությամբ ուղղաձիգ, ուղղանկյուն, բաց շագանակագույն երանգավորմամբ արտաքին (0,5 մմ հաստությամբ) և ներքին (0,8 մմ հաստությամբ) եզրագծերով շրջանակ: Շրջանակի արտաքին և |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ներքին եզրագծերի միջև եղած հատվածը՝ մուգ շագանակագույն: Շրջանակի հիմնամասի կենտրոնում՝ 65մմ բարձրության վրա տեղակայված է 80մմ (թույլատրելի շեղումը±0,1մմ/) տրամագծով և 5մմ (/թույլատրելի շեղումը ±0,5մմ/) հաստությամբ ամրացող միակողմ պատկերով սկավառակ: Սկավառակի ոսկեգույն եզրային հատվածի լայնությունը կազմում է՝ 20մմ (թույլատրելի շեղումը՝ /±0.1մմ/) : Սկավառակը աջ և ձախ եզրագծերով զուգահեռ զարդարված է 19մմ (թույլատրելի շեղումը՝ /±0,5մմ/) լայնությամբ դափնու ոսկեգույն տերևներով, որի տրամագիծը կազմում է 120մմ (թույլատրելի շեղումը՝ /±0,1մմ/), բարձրությունը՝ 1,5մմ (թույլատրելի շեղումը՝ /±0,1մմ/): Սկավառակը և դափնու տերևները պատրաստվում են արույրից: Սկավառակի եզրագծին զուգահեռ վերևի մասում մեծատառերով, ուռուցիկ և կորաձև գրված է «ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ» գրառումը և ներքևի մասում՝ «ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ» գրառումը: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Սկավառակի կենտրոնում տեղակայված է կապույտ էմալապատ շրջան, որի տրամագիծը` 60մմ է (թույլատրելի շեղումը` /±0.1մմ/)։ Էմալապատ շրջանի կենտրոնում տեղակայված է 57մմ երկարությամբ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ռելիեֆային խորհրդանիշը։ Սկավառակն ամրացված է թավշյա, մուգ կապույտ հիմնամասի վրա։ Շրջանակի մակերեսն ապակեպատ է։ Հուշանվերի հետնամասում ամրացված է հենակ սեղանին դնելու համար և կախիչ։ Պարգևագրի հետ միասին, մատակարարի կողմից մատակարարվելու է նաև 33մմ լայնություն, 100մմ երկարություն ունեցող չափսերով ուղղանկյունաձև արույրե ցուցանակ` առանց ամրացման, որը նախատեսվում է սկավառակի ներքևում, 16.4մմ բարձրության վրա տեղադրման համար` պարգևագիրը ստացողի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը հետագայում լրացնելու նպատակով։ |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՀՊ-26/18 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |